

«ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

Ք.Երեվան

Սվաճյան 322. բն. 19

հեռ : (010)724804

093978893

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/հ 2380017642120100

Հվհհ 01844994

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ООО «АБШИН НАХАГИЦ»

Г.Ереван

ул. Свачян д.32 кв.19

тел: (010)724804

093978893

«АРЭКСИМБАНК» ЗАО

Р/С 2380017642120100

ИНН 01844994


“HABSHIN NAKHAGITS” LLC

ԼԻՑԵՆԶԻԱ 14973

ЛИЦЕНЗИЯ 14973

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՍ»

«ՀԱՐ ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ



Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕԲՅԵԿՏ ՀՀ ք.Երևան , Աջափնյակ վ/շ, Հասմիկի փող. հ. 22/4 հասցեում գոյություն ունեցող մանկապարտեզի տեխնիկական վիճակի վերաբերյալ :

Շինության ծավալահատակագծային լուծումները

Մանկապարտեզի շենքը երկհարկանի է՝ նկուղային հարկով :

Շենքը կառուցվել է 1982 թվականին :

Շենքը հատակագծում ունի ուղղանկյան տեսք 39.00մ x 16.130 մ արտաքին չափերով :

Հարկերի բարձրությունը 3.30մ ,նկուղային հարկինը ` 2.6մ :

Շենքի կոնստրուկտիվ համակարգը իրականացված է հավաքովի ե/բ բազմանցք ծածկի սալերով :

Շենքի հորիզոնական կոշտությունը մի ուղղությամբ ապահովում է 6,3,6 , մյուս

ուղղությամբ 7 թռիչքանի 6x6 և 3 երկայնական ուղղությամբ : Լայնական

ուղղությամբ տեղադրված են կապային սալեր :

Պարզունակները - տավրածն 45սմ բարձրությամբ :

Հիմքերը - կետային են սյունակալներով :

Պատերը - հավաքովի ե/բետոնե պատի սալեր 25սմ հաստությամբ,որոնք սյուների հետ ամրացված են ճկուն կապերով :

Պատային պանելների թռիչքային մասերում տեղադրված են 80սմ լայն. և 25սմ հաստ. կանգնակներ /բետոնե միջնապատեր/,որոնք վրադիր տարրերի եռակցման միջոցով միացված են վերևի և ներքևի պանելների հետ:

Միջնորմները - իրականացված են թեթև անցքավոր փոքրաչափ սալերով և բլոկներով:

Ծածկերը - հավաքովի ե/բետոնե բազմանցք սալերից 22 սմ բարձրությամբ ,որոնք տեղադրված են առանց հեռացումների և հենվում են պարզունակների վրա :

Բոլոր կոնստրուկցիաները սվաղած են գաջե սվաղով :

Տանիքը հարթ է` ներքին ջրահեռացումով :

Հետազոտության արդյունքները

Ակնադիտական հետազոտությունից պարզվել է , որ շենքի կրող և պատող կոնստրուկցիաներում պատող պատերում, ծածկերում կան բազմաթիվ թերություններ :

- ✓ Միջնորմներում կան բազմաթիվ ճաքեր, անջատված են կրող կոնստրուկցիաներից :
- ✓ Կան տեղաշարժված ծածկի սալեր :Սալերի երկայնական ուղղությամբ նկատելի են ճաքեր :
- ✓ Հատակների կոնստրուկցիաները հիմնականում վնասված են :
- ✓ Ծածկի սալերն ու պարզունակները ունեն պարբերական թրջման հետքեր,որի հետևանքով գաջերը թափված են :

Ընդհանուր առմամբ շենքի հիմնական կրող կոնստրուկցիաները /սյուներ,պարզունակները և ծածկի սալերը/ դրանց կրողունակության վրա էապես ազդող ճաքեր ,դեֆորմցիաներ ,վնասվածքներ չունեն : Հիմքերում չեն նկատվում նստվածքային երևույթներ :

Ներկայիս վիճակում շենքի կրող կոնստրուկցիաները չեն բավարարում սեյսմակայուն շինարարության գործող նորմերի /ՅՅՇՆ II -6.02-2006/ պահանջներին

Համաձայն շենքերի և կառուցվածքների վերակառուցման ,վերականգման և ուժեղացման նորմերի / ՅՅՇՆ I-4.02-99/ պահանջների համաձայն:

Մանկապարտեզի վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը դրանց սեյսմոզինվածության ավելացումն է :Չափանիշ է հանդիսանում $K \geq 0$ սեյսմակայունության գործակիցը , որը որոշվում է շենքի վերջնական և հաշվարկային սեյսմակայունության հարաբերությամբ ,և բավարարում է $0.5 < K < 1$ պայմանին:

Գործող նորմերի պահանջներին չի բավարարում նաև ծածկի գոյություն ունեցող կոնստրուկցիան, քանի որ այն չի ապահովում կոշտ սկավառակի ստեղծումը ծածկերի մակարդակում :

Մանկապարտեզի շենքի սեյսմոզինվածության ավելացման համար պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները

- շենքի 2 փոխուղղահայաց ուղղություններով սյուների հորիզոնական առանցքային ուղղություններով տեղադրել նկուղային և 2 հարկի բարձրություն ունեցող միաձույլ ե/բ հատակագծում համաչափ տեղադրված դիաֆրագմաներ՝ միացված սյուների և պարզունակների հետ :
- դիաֆրագմաները պետք է ունենան առանձին հիմքեր՝ տեղադրված սյուների հիմքերի նրբանի մակարդակում :
- հեռացնել միջհարկանի ծածկի հատակի և վերնածածկի վրա գոյություն ունեցող հարթեցնող և ջերմամեկուսիչ շերտերը :
- ծածկի սալերի վրա իրականացնել ամրանավորված բետոնի ուժեղացնող շերտեր՝ ապահովելով դրանց համատեղ աշխատանքը ծածկի սալերի հետ
- հեռացնել պատային պանելների մասում տեղադրված և հորիզոնական ճաքեր ունեցող ե/բ միջնապատի սվաղի շերտերը և կապերի բացակայության դեպքում իրականացնել լրացուցիչ ամրացումներ միջապատի և պատային պանելների միջև

- հնարավոր է նաև պատուհանների փոքրացում միջնապատի 2 կողքերից և պատուհանագոգից
- իրականացնել ամրացման միջոցառումներ, որոնք կապահովեն միջնորմների շրջման կայունությունը հորիզոնական սեյսմիկ ազդեցությունների դեպքում
- վերակառուցել տանիքի կոնստրուկցիաները
- փոխարինել կամ գոյություն ունեցող կոմունիկացիաները և այլն
- բոլոր շինարարական աշխատանքները կատարել գործող շինարարական նորմերի և բերված հանձնարարականների հիման վրա կազմված համաձայնեցաված նախագծով :

ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ



Ա.ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

